

**Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ
2020**

**«Միսիան քաղաքում ագրոտեխնիկայի ուսումնական կենտրոնի ստեղծման» և
«Արաքսավան գյուղում նոր պոմպակայանի և ոռոգման համակարգի կառուցման»
ծրագրերի ստորագրման արարողություն**

2021թ. մարտի 18-ին ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունում տեղի ունեցավ «Միսիան քաղաքում ագրոտեխնիկայի ուսումնական կենտրոնի ստեղծման» մինչև 69,971 ԱՄՆ դոլար և «Արաքսավան գյուղում նոր պոմպակայանի և ոռոգման համակարգի կառուցման» մինչև 79,401 ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ ծրագրերի ստորագրման արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի (ՖՏ 2020) համար դրամաշնորհային աջակցության շրջանակում:

Ստորագրման արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ջուն Յամադան, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսության ծրագրերի իրականացման վարչության պետի տեղակալ Մանե Թափալցյանը, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր, պարոն Վարդան Ուռուսյանը, Եվրասիա բարեգործական հասարակական կազմակերպության գլխավոր տնօրեն, տիկին Լիանա Եսայանն և այլք:

«Միսիան քաղաքում ագրոտեխնիկայի ուսումնական կենտրոնի ստեղծման» ծրագրի արդյունքում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Միսիանի մասնաճյուղը հիմնելու է ագրոտեխնիկայի ուսումնական կենտրոն: Արդյունքում, տարեկան ավելի քան 250 ուսանող ուղղակիորեն կօգտվի տվյալ ծրագրից: «Արաքսավան գյուղում նոր պոմպակայանի և ոռոգման համակարգի կառուցման» ծրագրի արդյունքում Արաքսավանում կառուցվելու է նոր պոմպակայան և ոռոգման նոր համակարգ: Արդյունքում, ծրագրի իրականացումից կշահեն Արաքսավան գյուղի 64 ֆերմերային տնտեսություններ և ավելի քան 900 բնակիչներ:

Ջերմորեն ողջունելով հյուրերին, բացման խոսքում տիկին Թափալցյանը նշեց, որ Միսիանում ուսումնական կենտրոնի ստեղծումը նպատակ ունի զարգացնել ագրոտեխնիկայի գործընթացների կրթական բաղադրիչը և այդպիսով խրախուսել ուսանողներին օգտագործել ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաները: Տիկին Թափալցյանը նաև շեշտեց Արաքսավան համայնքի համար ոռոգման նոր համակարգի կարևորությունը, քանի որ նոր պոմպակայանի կառուցումը կբարձրացնի գյուղատնտեսական արտադրանքի ծավալը և կբարելավի բնակչության կենսամակարդակը:

Դեսպան Յամադան, իր խոսքում նշեց, որ գյուղատնտեսության ոլորտը հսկայական դեր ունի է Հայաստանի տնտեսության և պարենային անվտանգության համար: Հենց այդ պատճառով այս նախագծերի իրականացումն իսկապես անչափ կարևոր է ոչ միայն տեղական համայնքի համար, այլև կարևոր է ազգային մակարդակով: Դեսպան Յամադան նաև հավելեց, որ թեև այս երկու ծրագրերը

ունեն տարբեր շահառուներ, սակայն երկուսն էլ ունեն մեկ ընդհանուր նպատակ, այն է՝ աջակցել կայուն տարածաշրջանային զարգացմանը և մարդկանց կյանքի բարելավմանը՝ «Մարդկային անվտանգություն» հասկացության շրջանակում, որը անչափ կարևորում է Ճապոնիայի կառավարությունը:

Իրենց հերթին «Միսիան քաղաքում ագրոտեխնիկայի ուսումնական կենտրոնի ստեղծման» և «Արաքսավան գյուղում նոր պոմպակայանի և ոռոգման համակարգի կառուցման» ծրագրերն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչները շնորհակալություն հայտնեցին դեսպան Յամադային և Ճապոնիայի կառավարությանը ծրագրերի աջակցության համար և վստահեցրեցին, որ բոլոր ջանքերը կգործադրվեն ծրագրերի բարեհաջող իրականացման համար:

Ելույթներից հետո դեսպան Յամադան և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր, պարոն Վարդան Ուռուտյանը ստորագրեցին «Միսիան քաղաքում ագրոտեխնիկայի ուսումնական կենտրոնի ստեղծման» ծրագրի դրամաշնորհային պայմանագիրը, այնուհետև դեսպան Յամադան և Եվրասիա բարեգործական հասարակական կազմակերպության գլխավոր տնօրեն, տիկին Լիանա Եսայանը ստորագրեցին «Արաքսավան գյուղում նոր պոմպակայանի և ոռոգման համակարգի կառուցման» դրամաշնորհային ծրագրի պայմանագիրը:



ՀՀ Էկոնոմիկայի նախարարության
գյուղատնտեսության ծրագրերի իրականացման
վարչության պետի տեղակալ տիկին Թափալցյանի
ելույթը



Դեսպան Յամադայի ելույթը



Դեսպան Յամադան և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր պարոն Ուռուտյանը ստորագործում են դրամաշնորհի պայմանագիրը



Դեսպան Յամադան և «Եվրասիա» բարեգործական հասարակական կազմակերպության գլխավոր տնօրեն տիկին Եսայանը ստորագործում են դրամաշնորհի պայմանագիրը



Արարողությունը



Ստորագրման արարողության հարգարժան մասնակիցները